

ձեռնութեամբ կազմուած Ժողովներում՝ բանաւոր և գրաւոր կերպով ներկայացրեց ճեմարանիս բարոյական և նիւթական դրութիւնը, խնդրելով ազգային միակ բարձրագոյն կրթական այս հիմնարկութեան նիւթական ապահովութեան լուրջ աջակցութիւն, գոնէ մինչև Լուսաւորչի նոր գահակալի մուտքը Մայր Աթոռ:

Ժողովականները ամեն տեղ խոստացել են իւրեանց նիւթական օգնութիւնն ու աջակցութիւնը:

**Ա. Մեացականեան,**



## Մ Ա Ն Ր Լ ՈՒ Ր Ե Ր

— Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեամբ Թիֆլիսում փակուած է հայերէն «Անկախ Մամուլ» լրագիրը. սպարանը կնքուած է և տառերը գրաւուած:

— Թիֆլիսում առաջիկայ փետրուարից հրատարակուելու է հայերէն շաբաթաթերթ «Սարաղան» անունով, պատկերազարդ, Տէր Մկրտչեանի խմբագրութեամբ:

— Մօտ ապագայում Թիֆլիսում Գիւտ քահ. Աղանեանը մտադիր է հրատարակել մի ամենօրեայ թերթ «Հայրենիք» անունով:

— Այս յունուարից լոյս կտեսնի Թիֆլիսում նկարիչ Գարեգին Առնեանի խմբագրութեամբ հայերէն առաջին գեղարուեստական ամսագիրը «Գեղարուեստ» անունով:

— Այս յունուարի 26-ին լրանում է մեր առաջին մանկական ամսագիր «Աղբիւրի»-ի 25 ամեակը. այդ առթիւ Թիֆլիսում, «Աղբիւր»ի խմբագիր Տիգրան Նազարեանի ընկալարանում կլինեն յօրեւանական հանդէսներ:

— Վերջին ժամանակները մեր ազգային թատրոնական ազգատ ըէպէրտուարը ստուարացաւ մի քանի նոր ինքնուրոյն պիէսներով, որոնց թւում են նորերս Թիֆլիսի հայոց բեմի վրայ ներկայացրուած «Սպանուած Աղաւնին» Նար-Գոսի (համանուն լէպիկից վերածած) և «Կարմիր Մարգ» Սահառունու:

— Ա. Ահարոնեանը պատրաստում է մի նոր պիէս «Անթուշուն» անունով, որ պիտի ներկայացուի Քիֆլիսում հայ թատրոնի յիսնամեակին: — Պատրաստում է մի պիէս նաև Վ. Փափաղեանը «Այնտեղ» անունով, որ ներկայացուելու է Բաբում:

— Գերասանուհի Սաթ. Չմշկեանի թաղման օրը նախկին դերասան Ս. Սաֆրաղեանը հանդիսաւոր խօսք է տուել իւր Արամազդ սրդու անունով 5000 ռ. նուիրել Քիֆլիսում կառուցուելիք հայոց սեպհական թատրոնի համար:

Սաֆրաղեանի օրինակին հետեւել է Ս. Նունուֆարեանը նուիրելով մէկ հազար ռ.: Խրախուսանքի արժանի քայլեր:

— Պետերբուրգում լոյս է տեսել հայերէն երգիծաբանական՝ վերջերս դադարած «Սափրիչ»-ի միացեալ № 11 և 12:

— «Բազմավէպը» յայտնել էր, որ «Նրուսաղէմայ ձեռագրաց մէջ գտնուած է Լևոն Գ.-ի (1270—1289) Կեռան թագուհոյն և չորս զաւակներու խմբանկարը»:

Այժմ այդ նկարը հրատարակուած է «Անահիտ» թերթի մէջ, մեր միաբանակից Տ. Մետրոպ. վ. Տ. Մովսիսեանի բացատրական յօդուածով: Գարեգին վարդ. Յովսէփեանը 1901 թ. Լուծայի մէջ հրատարակել է նոյն թագաւորի պատկերը այն օրինակից, որ պահուած է Մ. Աթոռի թանգարանում: Այդ պատկերն ևս ժամանակակից նկարչի գործ է և ներկայացնում Լևոն Գ.-ին որպէս թագաժառանգ:

— Մօտ օրերս վախճանուել է Պարտիզակի բարձր. վարժարանի երաժշտութեան ուսուցիչ երիտասարդ հայ արուեստագէտ Տիգրան Տ. Անդրէասեանը, «որու տաղանդին վրայ արուեստին զիտակից բոլոր եւրոպացի և ամերիկացի այցելուներ հիացում կ'յայտնէին»:

— Այս ձմեռ Վաղարշապատում բացուեցան՝ Բաքուի կուլտուրական ընկ. ճիւղը, կիրականօրեայ դպրոց և մանր վարկի փոխատու գանձարան՝ երեք հասարակական օգտակար գործոններ: Ձեռնարկողները տեղիս երիտասարդ ինտելիգէնտ ուժերն են:

— Զրօրհնեաց տօներին միաբանակից շնորհալի երաժշտագէտ հայր Կոմիտաս վարդապետը ձեմարանի դաստիարակ պ. Վահան Տէր Առաքելեանի (թէնոր) հետ գնաց Իգդիր, տեղական ուժերի կողմից հրաւիրուած լինելով դասախօսութիւն կարգալ հայկական երաժշտութեան մասին և կոնցէրտ տալ: Արժանապատիւ երաժշտագէտը մեծ յաջողութիւն է ունեցել թէ՛ ա-

առջի և թէ՛ երկրորդ մասերում: Սօլօ երգել են ինքը հ. Կոմի-  
տասը և պ. Տէր Առաքելեանը՝ դասախօսութիւնը, ղիւրմըրը-  
նելի և համեմուած ժողովրդական երաժշտութեան սիրուն կտոր-  
ներով, մեծ հետաքրքրութիւն է շարժել հասարակութեան մէջ:

— Լսում ենք, մեծ պատի վերջին շաբաթները նոյն հայր  
սուրբը հրաւիրուած է Բաքու դասախօսելու և կոնցէրտ տա-  
լու: Իսկ Չատիկ տօներին արժան. երաժշտագէտը մտադիր է  
նոյնն անել Էջմիածնում և Երևանում:

X

— Ամսոյս 10-ին Ֆրայբուրգում վախճանուեց Ստրազ-  
բուրգի համալսարանի ուսուցչապետ Հ. Հիւրշմանը: Հանգու-  
ցեալը ակնաւոր գիտնական էր և հմուտ լեզուագէտ. յատ-  
կապէս մասնագէտ էր հայերէնի, որի դասախօսն էր նա հա-  
մալսարանում տասնեակ տարիներ: Նա ունի հայերէն յայտնի  
ուսումնասիրութիւններ և նորա մահուամբ մեր կորուստը  
շատ մեծ է: Հետեւեալ անդամ կտանք նրա կենսագրականը:

— Կաթողիկոսական ընտրութիւնը ընդհանուր հետա-  
քրքրութիւն է յառաջ բերել թէ՛ հայկական և թէ՛ ռուսական  
մամուլում: Այդ առթիւ պարբերաբար յօդուածներ են երե-  
ւում «ՅՈՒ», «Закавказье», «Приазовский Край», «Надежда»  
թերթերում:

— Պետերբուրգում այս յունուարի 3-ից սկսած բացուած  
էր «ժողովրդական համալսարանների գործիչների համառուսա-  
կան համագումարը», որ նպատակ ունի հաստատուն հիմքերի  
վրայ դնել այս վերին աստիճանի օգտակար ժողովրդական կրթ-  
թական հաստատութիւնները:

— Յունուարի 9-ին Պետերբուրգում, Տէնիշէլսիու թատ-  
րոնական դահլիճում մի դրական երաժշտական երեկոյթով տօ-  
նուել է կոմս Լ. Տոլստոյի 80 ամեակը: Երեկոյթին խօսել են  
ականաւոր ուսմաներ ու դաշնամուրի աջակցութեամբ նուագել  
է «Կրէյցերեան Սօնատը»-ը յայտնի հայ ջութակահար Յովհաննէս  
Նալբանդեանը:

— Առաջիկայ մայիսի 4-ին Թիֆլիսում տօնուելու է դրա-  
կանագէտ Լէօնի 25 ամեայ յոբելեանը: Այդ մասին կազմուած  
կոյ առանձին յոբելեանական յանձնաժողով:

— Թիֆլիսում մի բանի ինտէլեկէնտ կանայք մտադիր են  
կազմել «Երեխաների կլուբ», ուր երեխաների համար պէտք է  
կազմակերպեն դասողան մանկական խաղեր և զուարճութիւն-  
ներ: Համակրելի ձեռնարկութիւն:

— Մօտերս Մոսկուայում վախճանուած հայ բանաստեղծ-մանկավարժ Ամբաս Շահաղիղը, լրագրերի ասելով թողել է մօտ 150 հազար ռուբլու մի խոշոր ժառանգութիւն, որի աղբոս-գում աործադրութեան համար, նոյն լրագրերի հիման վրայ, նա պէտք է թողած լինի և մի օրինական կտակ, որ դժբախտաբար մինչև օրս հրապարակ ելած չէ և որի գոյութեան մասին այժմ կասկածներ կան: Խօսում են, որ Շահաղիղը իւր կտակի մասին ժամանակին տեղեկացրած պէտք է լինի կաթուղիկոսական վեհարան և Պօլսի պատրիարքարան: Եթէ հանդուցեալ բանաստեղծի կարծեցեալ կտակը չգտնուի, օրինական ճանապարհով նորա թողած հարստութեան ժառանգ են հանդիսանում նորա մօտիկ ազգականները:—Ցանկալի էր մեր մէջ կանոնաւորել առհասարակ կտակների գործը:

— Պօղոս Նուբար փաշայն 40,000 ոսկի նուերից Գահիրէի ազգային վարչութիւնը որոշել է 15,000 ոս. յատկացնել Գալլստեան վարժարանին, իսկ 25,000 ոսկու տոկոսով ընդունակ ուսանողներ պահել եւրոպական համալսարաններում:

— Փարիզի «Հայ Աշխատաւորաց Միութեան» Ընկերութեան նախաձեռնութեամբ յունուարի սկզբներում այնտեղ կայացել է մի ժողովրդական դասախօսութիւն, յատկապէս նուիրուած նորոգ հանգուցեալ կաթուղիկոս Մկրտիչ Ա.-ին: Գասախօս պ. Խ. Մ. երեք շրջանի բաժանելով Հայրիկի կեանքը՝ Խրիմեան իբրև վարդապետ, Խրիմեան իբրև պատրիարք և Խրիմեան իբրև կաթուղիկոս, ծանրացել է առաջին շրջանի վրայ և գրուածել է հանգուցեալ կաթուղիկոսի ժողովրդական դործունէութիւնը:

— Յունուարի 19-ին, Լիսսաբոնում, չարագործների հրատապ գնդակներին զոհ են գնացել Փորթուգալիայի թագաւորն ու գահաժառանգը:

— Օրինակելի բարեգործութիւն. Ի յիշատակ նորերս Բաբուում վախճանուած յայտնի քաղաքացի Արտ. Բողդ. Ղորղանեանի, նորա որդի Աղէքսանդր Ղորղանեանցը Բաբուի հայոց կալատուր. ընկերութեան նուիրաբերել է միանուագ 10,000 ռուբլի, որպէս զի այդ գումարով ընկերութիւնը բանայ Գիրք գիւղում գիւղական երկրասեան դպրոց, որի ապահովութեան համար բարեգործ Ղորղանեանը կապել է բացուելիք դպրոցին նաև առանձին տարեկան 1,500 ռուբլի: Գպրոցը կոչուելու է հանգուցեալի անուամբ: Հանդիստ հանգուցեալի ոսկորներին և պատիւ նորա արժանաւոր ժառանգին:

— Անուան Աբովեանի «Վեբ Հայասանի» երկի նոր, ժողովրդական էժանագին հրատարակութեան համար Բաբուեցի

նաֆթատէր Դ. Բ. Աւան-Իւզըաշեանը նուիրաբերել է Բաքուի հայոց կուլտուր. ընկերութեան մէկ հազար ոսկի: Խրախուսանքի արժանի ձեռնբերեցութիւն. այժմ, քան երբեքէ, մեծ կարիք կայ մեր զբաղանութեան գոհարները ժողովրդականացնել:

— Կովկասեան Հայոց Բարեգործական քնկերութիւնը, լրագրերի ասելով, վերականգնուած է ո՛չ միայն իւր նախկին (1881—1886), այլ և աւելի ընդլայնած ծրագրով: Այդպիսով ուրեմն Թիֆլիսի հայոց բարեգործ. ընկերութեան վերջին ընտրուած վարիչներն նախաձեռնութեամբ կազմուած ու մշակուած նոր կանոնադրութիւնը ընդունուած և հաստատուած է լիովին նահանգական այն ատեանի կողմից, որ ունի այժմ պաշտօն այդօրինակ կանոնադրութիւններ քննելու և թոյլատրելու: Կովկաս. Հայոց բար. ընկ. բացումը թոյլատրուած է յունուարի 23-ից: Ընկերութիւնը այժմեանից իսկ կարող է բանալ հայաբնակ վայրերում ճիւղեր: Ցանկանում ենք այս՝ միշտ էլ համբաւաւոր ընկերութեան կատարեալ յաջողութիւն:

— Յունուարի 24-ին Թիֆլիսում, 55 ամեայ հասակում կնքել է իւր մահկանացուն յայտնի հասարակական գործիչ Միք. Յով. Թամամշեանը, որ ձեռք տարիներ ներգործական դեր էր խաղում Թիֆլիսի քաղաքային, հասարակական բոլոր գործերում, աշխատակցելով տեղական մամուլի շատ օրգաններին: Անցեալ տարի նա «Կովկասագիտական կուրսեր»-ում դասախօսում էր «Արեւելքի կրօնների պատմութիւնը»:

— Այս տարի Մոսկուայում պիտի լոյս տեսնի զբաղան ու գեղարուեստական մի կիսամսեայ հանդէս «Մակոյլ» անունով, Արշակ Կայծունու խմբագրութեամբ:

— Թիֆլիսի Հայոց զրամատիքակ. ընկերութիւնը խնդրամատոյց է եղել Փոխարքային թոյլ տալ՝ Կովկասում հայոց թատրոնի նոր շինութեան համար ժողովարարութիւն անել:

— Հայ բանաստեղծ Ս. Շահազիզի մահուան առթիւ «Արարատ»-ի խմբագրութիւնը ուղղեց Մոսկուա հետեւեալ հեռագիրը. Մոսկուա, Լազարեան ձեմարան, Քրիստափոր Յովհաննիսեանցին:

«Արարատ»-ի խմբագրութիւնը ամենահամակրելի բանաստեղծ և մի քանի սերունդների ուսուցիչ Շահազիզի մահուան առթիւ իւր խորին վիշտն արտայայտելով, խնդրում է Ձեզ նորա թաղման հանդիսին իւր ներկայացուցիչը լինել:

1. Հայաստանի Գ. Ս. Մանուկյանի 1906 թ. հունիսի 24-ին Մոսկուայում կատարուած հիշատակարար ժողովի քննարկութեան արդիւնքը: 2. Կովկասի Հայոց Բարեգործական քնկերութեան 1906 թ. հունիսի 24-ին Մոսկուայում կատարուած հիշատակարար ժողովի քննարկութեան արդիւնքը: